

16  
ՄԱՐՏԻ  
2020

Luys Lnyju®



10 YEARS



EaP | Eastern Partnership

ԵՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ  
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

# ԵՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
1. 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՄ-ՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՎ ԱԼԳ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՄ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ.....	1
2. «ԵՌՅԱՎ», ԹԵ՛ «ԵՌՅԱԿ +». ՈՐ ՄՈԴԵԼՈՎ Է ԱԼԳ-Ը ՊԱՏՐԱՍՏԱՎՈՒՄ ԱՌԱՋ ՇԱՐԺՎԵԼ .....	7
3. ԱԼԳ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՅԼ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ .....	12
4. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԱԿԱՍԸ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԼԳ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ .....	14
4.1 Վրաստան .....	14
4.2 Ադրբեջան .....	15
4.3 Հայաստան .....	18

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԵՄ Արևելյան գործընկերության «20 թիրախային արդյունք 2020թ. համար» ծրագիրը մոտենում է ավարտին, և այս տարի ԵՄ երկրները նախատեսում են մշակել նոր քաղաքականություն, որը պետք է դառնա առաջիկա տարիների համար ԱԼԳ զարգացման հիմնական ուղեցույցը: ԵՄ-ի հետ հարաբերությունները՝ առհասարակ և ԱԼԳ շրջանակներում համագործակցությունը՝ մասնավորապես, ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություններից են: Հետևաբար, շատ կարևոր է հասկանալ, թե ինչպիսին են ԱԼԳ ծրագրի զարգացման հավանական մոդելների վերաբերյալ ԵՄ մոտեցումները:

ԱԼԳ ծրագրի հետագա զարգացման վերաբերյալ պատկերացում կազմելու համար հարկավոր է նախ ուսումնասիրել ԵՄ-ում ստեղծված քաղաքական լանդշաֆտը, ծրագրի տեղը ԵՄ երկրների առաջնահերթությունների շարքում: ԵՄ առջև ծառայած մի շարք մարտահրավերների, Միությունում առկա ներքին խնդիրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԱԼԳ ծրագրի նկատմամբ ԵՄ երկրների ընդհանուր հետաքրքրությունը նվազել է: Կախված նրանից, թե ծրագրի զարգացման ինչ մոդել կընտրվի, շատ կարևոր է գնահատել դրա ազդեցությունը մեր տարածաշրջանի վրա:

Այս վերլուծության նպատակն է հասկանալ, թե Արևելյան գործընկերության ապագայի վերաբերյալ որ նախագծերն են հիմնականում քննարկվում Եվրոպացիների կողմից, դրանցից որը իրականանալու ավելի մեծ հնարավորություններ ունի: Միաժամանակ փորձել ենք հասկանալ, թե ինչպիսին է լինելու Հայաստանի տեղն ու դերը ԱԼԳ ծրագրում, ինչ կարող է վերջինս ստանալ այդ ծրագրից: Դա հասկանալու համար փորձել ենք ներկայացնել ծրագրի շրջանակներում Հայաստանի առաջնահերթությունները, գնահատել մեր կողմից իրականացվող քայլերի արդյունավետությունը:

## 1. 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՄ-ՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՎ ԱԼԳ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՄ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

2019 թվականին ԵՄ-ում տեղի ունեցան խորհրդարանի ընտրություններ, և ձևավորվեց նոր խորհրդարան, ինչպես նաև ընտրվեցին հիմնական պաշտոնյաները, որոնք առաջիկա տարիներին պատասխանատու են լինելու ԵՄ քաղաքականության համար: Եվրոպական խորհրդարանի նոր կազմի, առանցքային նշանակություն ունեցող պաշտոնների և ձևավորված ուժերի հավասարակշռության վերլուծությունը հնարավորություն է տալիս նաև որոշակի պատկերացում կազմելու առաջիկա տարիներին ԵՄ արտաքին քաղաքական գերակայությունների վերաբերյալ: Այս տեսանկյունից, մեզ համար առավել կարևոր

է, թե նոր իրավիճակում ինչպիսի փոփոխություններ տեղի կունենան եվրոպական հարևանության և ընդլայնման քաղաքականության՝ առաջին հերթին Արևելյան գործընկերության ծրագրի մեջ:

ԵՄ-ում տեղի ունեցած քաղաքական վերադասավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ֆրանս-գերմանական մերձեցումը հետզհետե ավելի մեծ ազդեցություն է ունենում ԵՄ ընդհանուր քաղաքական լանդշաֆտի վրա: Դեռևս 2019թ. հունվարին Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի կողմից Ասիսենում ստորագրված հայտնի համաձայնագիրը ուրվագծեց այդ մերձեցման հետ կապված առաջնահերթությունները<sup>1</sup>: Երկու երկրների արդյունավետ համագործակցությունը իր հետքը թողեց նաև ԵՄ-ում հիմնական բարձրաստիճան պաշտոնյաների նշանակման գործընթացի վրա:

Գերմանիայի և Ֆրանսիայի միջև փոխզիջման արդյունքում ԵՄ առանցքային պաշտոններում նշանակվեցին Արևմտյան Եվրոպայի երկրների ներկայացուցիչները, իսկ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի ներկայացուցիչները բավարարվեցին ավելի ցածր պաշտոններով: Սա բնականաբար կազդի նաև որոշումների կայացման գործընթացի վրա: Միաժամանակ, այդ գործընթացը ԵՄ-ում ավելի բարդ է լինելու՝ հաշվի առնելով ազդեցիկ խմբավորումների՝ ԵԺԿ-ի և Սոցիալ-դեմոկրատների առաջադեմ դաշինքի դիրքերի որոշակի թուլացումը, կանաչների, լիբերալների, եվրոսկեպտիկների ու պոպուլիստների դիրքերի ամրապնդումը: Որոշումների կայացման գործընթացում, այդ թվում՝ ընդլայնման ծրագրի շրջանակներում, ԵՄ ավանդական ազդեցիկ քաղաքական ուժերը ավելի հաճախ են ստիպված լինելու համագործակցել փոքր քաղաքական ուժերի հետ, նրանց հետ փոխզիջումային տարբերակներ գտնել, ինչը բարդացնելու է այդ գործընթացը<sup>2</sup>:

ԵՄ-ում Ֆրանս-գերմանական տանդեմի ամրապնդման վրա իր ազդեցությունը թողեց նաև Բրեքզիթի գործընթացի ավարտը, ինչը ընդհանուր առմամբ ավելի ամրապնդեց միությունում այս երկու պետությունների գերակայությունը: Մեծ Բրիտանիան սովորաբար աջակցում էր ԵՄ ընդլայնմանը դեպի արևելք, ինչը տեղավորվում էր վերջինիս հակառուսական քաղաքականության տրամաբանության մեջ: Փորձագիտական շրջանակների կողմից հաճախ հնչում են տեսակետներ, թե Բրեքզիթից հետո ԵՄ-ում Մեծ

<sup>1</sup> Treaty of Aachen: a new treaty to strengthen Franco-German cooperation and facilitate convergence between the two countries, 22.01.2019, <https://www.gouvernement.fr/en/treaty-of-aachen-a-new-treaty-to-strengthen-franco-german-cooperation-and-facilitate-convergence> (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>2</sup> Եվրոպական քաղաքական նոր լանդշաֆտը, «Լոյս» հիմնադրամ, 17.10.2019, <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=66> (այցելվել է 12.03.2020թ.):

Բրիտանիայի դերակատարությունը կարող են ստանձնել ԵՄ-ում վերջին տարիներին նկատելի առաջընթաց գրանցած որոշ պետություններ. առաջին հերթին այդպիսի հավակնություններ է ներկայացնում Լեհաստանը: Չնայած դրան՝ առայժմ վաղ է այդպիսի վերլուծությունները իրատեսական համարել, քանի որ Լեհաստանը թե՛ տնտեսապես, թե՛ աշխարհաքաղաքական դերակատարության տեսանկյունից դեռևս զգալիորեն զիջում է ոչ միայն Ֆրանսիային ու Գերմանիային, այլև Իտալիային, Իսպանիային, Նիդեռլանդներին:

Հաշվի առնելով վերոհիշյալ իրողությունները՝ կարող ենք ենթադրել, որ առաջիկա տարիներին ֆրանս-գերմանական տանդեմը շարունակելու է որոշիչ դերակատարություն ունենալ ԵՄ արտաքին քաղաքականության մշակման և իրացման գործում: Հետևաբար, հիմնականում հենց այս երկրների դիրքորոշումից է կախված, թե ինչպիսի ճակատագրի կարժանանա ԵՄ հարևանության և ընդլայնման քաղաքականությունը՝ այդ թվում Արևելյան գործընկերության ծրագիրը: Միաժամանակ ակնհայտ է, որ Լեհաստանի դիրքերի որոշակի ամրապնդումը և համագործակցության խորացումը մերձբալթյան և սկանդինավյան երկրների հետ ինչ-որ տեղ կմեծացնի նաև վերջինիս դերակատարությունը որոշումների կայացման գործընթացում, մասնավորապես՝ ԱԼԳ ծրագրի շրջանակներում:

Ինչպես նշվեց, ԱԼԳ ծրագրի հետագա ճակատագիրը մեծ մասամբ կախված է Ֆրանսիայի և Գերմանիայի քաղաքականությունից: Ակնհայտ է, որ ներկայումս այս երկրների օրակարգում ԱԼԳ ծրագիրը չի դասվում առաջնահերթությունների շարքին, իսկ ընդհանուր վերաբերմունքը ծրագրի արդյունավետության ու հետագա ճակատագրի նկատմամբ նույնը չէ, ինչ դեռևս 2009-ին՝ ծրագրի մեկնարկի ժամանակ էր: ԵՄ-ն այսօր բախվում է մի շարք այլ կարևոր խնդիրների հետ, և Գերմանիան ու Ֆրանսիան՝ որպես միության շարժիչ ուժեր, իրենց ջանքերը առաջիկա տարիներին կենտրոնացնելու են հենց այդ խնդիրների լուծման ուղղությամբ:

Գերմանիան վերջին տարիներին երկկողմ դինամիկ հարաբերություններ է զարգացրել ԱԼԳ բոլոր երկրների հետ և այս տեսանկյունից սկսել է ավելի շատ կարևորել հարաբերությունների զարգացման հենց այդ ձևաչափը, քանի որ Արևելյան Եվրոպայում իր ազդեցությունը մեծացնելու համար ԵՄ մակարդակով լրացուցիչ մեխանիզմների կարիք չի զգում: Բեռլինը բացասական է տրամադրված ԵՄ-ին ԱԼԳ երկրների հետագա անդամակցության գաղափարի նկատմամբ և շահագրգռված չէ այդ երկրների հանդեպ անվտանգության ոլորտում լրացուցիչ պարտավորություններ ստանձնելու հարցում: Միգրացիոն ճգնաժամերը, տնտեսական բարդությունները հանգեցրել են նրան, որ գերմանացիների մի մասը բացասական վերաբերմունք է արտահայտում նաև 2004-ի ընդլայնման

վերաբերյալ<sup>3</sup>: Փոխարենը Բեռլինն ավելի շատ շահագրգռված է ԱԼԳ երկրների հետ տնտեսական ոլորտում հարաբերությունների խորացման հարցում, ինչը հնարավորություն կտա ընդլայնել գերմանական կազմակերպությունների ու բիզնեսի ներկայությունը տարածաշրջանում: Հետևաբար, ԱԼԳ ծրագրի մեխանիզմների շրջանակում Գերմանիան մեծ կարևորություն է տալիս հատկապես ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին:

Մի շարք փորձագետներ գտնում են, որ Գերմանիան շահագրգռված է Ասոցացման համաձայնագիրը ստորագրած երկրների դեպքում կիրառել ԵՄ-Թուրքիա հարաբերությունների մոդելը, ինչը չի հանգեցնի վերջիններիս անդամակցությանը ԵՄ-ին: Բեռլինը մեծ կարևորություն է տալիս նաև ԱԼԳ երկրների հետ հանրային մակարդակով շփումների ակտիվացմանը, այնտեղ Գերմանիայի մասին դրական իմիջի ձևավորմանը<sup>4</sup>: Միաժամանակ, Գերմանիայի իշխանությունները շահագրգռված չեն ԱԼԳ տարածաշրջանում ՌԴ-ի հետ մրցակցության պատճառով Մոսկվայի հետ հարաբերություններում լրացուցիչ լարվածության առաջացնելու հարցում: Գերմանիայի համար հատկապես կարևոր է ՌԴ-ի հետ համագործակցությունը էներգակիրների ներմուծման ոլորտում, որի վառ ապացույցն է մեծ հետաքրքրությունը «Հյուսիսային հոսք-2» ծրագրի նկատմամբ: Հետևաբար կարելի է ենթադրել, որ Բեռլինի շահագրգռվածությունը ԱԼԳ ծրագրի հատկապես քաղաքական բաղադրիչի զարգացման հարցում խիստ սահմանափակ է լինելու:

Ֆրանսիան, առավելապես՝ Էմանուել Մակրոնի նախագահության ժամանակահատվածում, նույնպես առանձնապես մեծ շահագրգռվածություն չի ցուցաբերում ընդլայնման գործընթացի նկատմամբ: Ընդհանուր առմամբ, Ֆրանսիայում կա տեսակետ, որ ԵՄ ընդլայնումը դեպի արևելք՝ հատկապես 2004-ից հետո, նպաստել է միությունում Գերմանիայի դիրքերի ամրապնդմանը և նվազեցրել է Ֆրանսիայի ազդեցությունը<sup>5</sup>: Մեծ Բրիտանիայի կողմից ԵՄ-ն լքելու հանգամանքը միայն ավելի կխորացնի Փարիզի այս մտահոգությունները, քանի որ կնպաստի Գերմանիայի դիրքերի ամրապնդմանը:

<sup>3</sup> Why Can't the EU's West and East Work as One? TOMÁŠ VALÁŠEK, 08.11.2019, <https://carnegieeurope.eu/2019/11/08/why-can-t-eu-s-west-and-east-work-as-one-pub-80300> (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>4</sup> The Eastern Partnership Vision after 2020, Jakub Benedyczak, Anna Maria Dyner, Lidia Gibadło, Elżbieta Kaca, Jakub Pieńkowski, Daniel Szeligowski, 03, 2019, <http://www.tihanyopolitics.eu/wp-content/uploads/2019/04/The-Eastern-Partnership-Vision-after-2020.pdf> (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>5</sup> By blocking enlargement decision, Macron undercuts France's Balkan goals, Loic Tregoures, 30.10.2019, <https://www.atlanticcouncil.org/blogs/new-atlanticist/by-blocking-enlargement-decision-macron-undercuts-frances-balkan-goals/> (այցելվել է 12.03.2020թ.):

Առհասարակ, Ֆրանսիան, ինչպես նաև ԵՄ որոշ երկրներ՝ Ավստրիան, Իտալիան, Բենիլյուքսի երկրները, այնքան էլ շահագրգռված չեն ԱԼԳ ծրագրի շրջանակներում համագործակցության խորացման հարցում, քանի որ ավելի շատ հետաքրքրված են դեպի հարավ ԵՄ-ի ընդլայնման կամ համագործակցության խորացման հարցում: Բացի այդ, վերջիններս ավելի շատ շահագրգռված են Լատինական Ամերիկայի, Ասիայի որոշ երկրների հետ ազատ առևտրի պայմանագրերի ստորագրման հետագա հնարավորություններով, ինչը միաժամանակ հնարավորություն կտա բացառությունների միջոցով պաշտպանել սեփական տնտեսության որոշ ճյուղեր, մասնավորապես՝ գյուղատնտեսությունը: Հիմնականում հենց այս երկրներն էին հանդես գալիս ԱԼԳ երկրների հետ մոտքի արտոնագրերի ազատականացման գործընթացին դեմ: Ուշագրավ է, որ այս երկրները 2019թ. հոկտեմբերին նաև հանդես եկան Ալբանիայի և Հյուսիսային Մակեդոնիայի հետ անդամակցության շուրջ բանակցություններ սկսելու դեմ<sup>6</sup>:

Ֆրանսիան մտահոգված է, որ մոտքի արտոնագրերի ազատականացումը կհանգեցնի ներգաղթյալների հոսքի ավելացմանը: Ուշագրավ է, որ Փարիզը նման մտահոգություններ ունի նաև Հայաստանի համար մոտքի արտոնագրերի ազատականացման հեռանկարի վերաբերյալ, քանի որ Ֆրանսիայում արդեն իսկ առկա խոշոր հայ համայնքը կարող է խթանել Հայաստանից ներգաղթյալների նոր հոսքը: Մոլդովայի, Վրաստանի և Ուկրաինայի բացասական փորձը ավելի հիմնավոր են դարձնում այս մտահոգությունները: Ընդհանուր առմամբ, ինչպես Գերմանիան, Ֆրանսիան նույնպես հետաքրքրված է հիմնականում ԱԼԳ երկրների հետ տնտեսական հարաբերությունների խորացման և ենթակառուցվածքների զարգացման հարցում<sup>7</sup>:

ԱԼԳ ծրագրի հետագա զարգացման մասին ավելի լավ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հասկանալ, թե ներկայումս այն ԵՄ առաջնահերթությունների շարքում ինչ տեղ է զբաղեցնում: Ուսումնասիրելով եվրոպացի քաղաքական գործիչների հիմնական խոսույթի օրակարգը՝ նկատելի է դառնում, որ ԱԼԳ ծրագիրը, ինչպես նաև առհասարակ՝ հարևանության և ընդլայնման քաղաքականությունը, դրանում առաջնային տեղ չեն զբաղեցնում: Այսօր ԵՄ առջև ծառայած են մի շարք այլ՝ բնույթով ավելի կարևոր մարտահրավերներ, հետևաբար պետք չէ ակնկալել, որ առաջիկա տարիներին ԵՄ

<sup>6</sup> What a New Commission Means for EU Policy, Stratfor, 11.11.2019, <https://worldview.stratfor.com/article/what-new-european-commission-means-eu-policy-politics> (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>7</sup> The Eastern Partnership Vision after 2020, Jakub Benedyczak, Anna Maria Dwyer, Lidia Gibadło, Elzbieta Kaca, Jakub Pieńkowski, Daniel Szeligowski, 03,2019, <http://www.tihanyopolitics.eu/wp-content/uploads/2019/04/The-Eastern-Partnership-Vision-after-2020.pdf> (այցելվել է 12.03.2020թ.):

երկրները նույնքան մեծ հետաքրքրություն են ցուցաբերելու ԱԼԳ ծրագրի նկատմամբ, որքան դրա մեկնարկային փուլում էին ցուցաբերում:

Մասնավորապես, այսօր ԵՄ երկրների առջև ծառայած հիմնական ներքին մարտահրավերները կարելի է բաժանել մի քանի խմբերի.

1 ԵՄ-ում առաջնորդության և համերաշխության ճգնաժամը՝

ա) ուժերի հավասարակշռության խախտումը, այդ թվում՝ Գերմանիայի դիրքերի ամրապնդումը, Բրեքզիթը,

բ) ԵՄ-ում ինստիտուցիոնալ ճգնաժամը, ավելի մեծ պատասխանատվություն ստանձնելու անպատրաստությունը,

գ) արժեքների և շահերի միջև խորացող հակասությունը:

2 Տնտեսական բնույթի կոմպլեքս ճգնաժամը՝

ա) միասնական արժույթը, բայց տարբեր տնտեսական մոդելները,

բ) տնտեսական զարգացման մակարդակի տարբերությունները,

գ) բարդ սոցիալական համակարգը:

3 Միգրացիոն ճգնաժամը և ահաբեկչությունը՝

ա) ներգաղթի աննախադեպ տեմպը,

բ) շենգենյան համակարգի ճգնաժամը և միգրացիոն ծանրաբեռնվածության անհամաչափությունը, ներգաղթյալների ինտեգրման խնդիրը,

գ) ահաբեկչության աճը:

4 Լեգիտիմության ճգնաժամը՝

ա) վերազգային բաղադրիչի ընդլայնման խնդիրները,

բ) ԵՄ ինստիտուտների չափազանց քաղաքականացումը, Եվրոսկեպտիկների թվի ավելացումը<sup>8</sup>:

Բացի վերոհիշյալ խնդիրներից, այսօր ԵՄ-ում քննարկվող կարևոր հարցերից են նաև բնապահպանական, կլիմայական խնդիրները, առևտրային պատերազմները՝ հատկապես ԱՄՆ-ի և ՉԺՀ-ի միջև, պատժամիջոցները, Իրանի հետ կապված խնդիրը, Մերձավոր Արևելքի հակամարտությունները և այլն: Վերջին տարիներին ակտիվորեն քննարկվում է նաև ԵՄ-ում սեփական ՁՈՒ-ի ստեղծման գաղափարը, որը առաջ է մղվում նաև Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն դեր Լայենի և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի կողմից<sup>9</sup>: Հետևաբար, ներքին և արտաքին այսքան շատ խնդիրների ու մարտահրավերների, այլ առաջնահերթությունների առկայությունը սահմանափակում են ԱԼԳ ծրագրի

<sup>8</sup> Разбалансированная Европа и новый порядок на пространстве ОБСЕ, Иван Тимофеев, 18.04.2018, <https://ru.valdaiclub.com/a/reports/razbalansirovannaya-evropa/> (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>9</sup> Reimagining a Global Europe, LIZZA BOMASSI, PIERRE VIMONT, 11.12.2019, <https://carnegieeurope.eu/2019/12/11/reimagining-global-europe-pub-80554> (այցելվել է 12.03.2020թ.):



նկատմամբ ԵՄ հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը<sup>10</sup>: Հավանաբար, ԱԼԳ ծրագրի նկատմամբ առաջիկա տարիներին ավելի մեծ շահագրգռվածություն են ցուցաբերելու հիմնականում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները<sup>11</sup>:

Եթե առհասարակ դիտարկենք ԵՄ ընդլայնման քաղաքականությունը, ապա առաջիկայում եվրոպացիները նախապատվությունը տալու են Արևմտյան Բալկանների երկրների հետ հարաբերությունների խորացմանը և հետագա ինտեգրամանը: Դեռ նախքան Եվրոպական հանձնաժողովի նախագահ ընտրվելը Ուրսուլա ֆոն դեր Լայենը իր ծրագրային ուղեցույցում նշում էր, որ Արևմտյան Բալկանների ապագան պատկերացնում է ԵՄ-ի հետ միասին: Վերջինս նաև պաշտպանում էր Հյուսիսային Մակեդոնիայի և Ալբանիայի հետ բանակցություններ սկսելու գաղափարը<sup>12</sup>:

Ընդհանուր առմամբ, մեծ է հավանականությունը, որ ԵՄ երկրները ընդլայնման հարցում նախապատվությունը կտան հենց բալկանյան ուղղությանը և այնտեղ փոխզիջման կհասնեն՝ հավանաբար նաև ի հաշիվ ԱԼԳ ծրագրի: Բոլորովին վերջերս Եվրոպական հանձնաժողովը ներկայացրեց Արևմտյան Բալկաններում ընդլայնման ծրագրի նոր մեթոդոլոգիան, որը ենթադրում է այդ տարածաշրջանի երկրների հետ անդամակցության շուրջ բանակցությունների ու համագործակցության երկարատև ու բարդ գործընթաց<sup>13</sup>: Նաև այս գործընթացի արդյունավետությունից կախված՝ կարող է ձևավորվել ԱԼԳ ծրագրի զարգացման ապագա օրակարգը, սակայն դեռևս հստակ չէ, թե ԵՄ երկրները առաջիկա տարիների համար ԱԼԳ զարգացման ինչ մոդել կընտրեն:

## 2. «ԵՌՅԱՎ», ԹԵ՛ «ԵՌՅԱԿ +» .Ո՞Ր ՄՈԴԵԼՈՎ Է ԱԼԳ-Ը ՊԱՏՐԱՍՏԱՎՈՒՄ ԱՌԱՋ ՇԱՐԺՎԵԼ

ԵՄ Արևելյան գործընկերության ներկայիս «20 թիրախային արդյունք 2020թ. համար» ծրագիրը մոտենում է ավարտին, և այս տարի պետք է մշակվի նոր քաղաքականություն, որը առաջիկա տարիներին պետք է դառնա ԱԼԳ

<sup>10</sup> Отношения России и Евросоюза в 2020 г.: возможности, ограничения, вероятные тренды, Андрей Кортюнов, 29.11.2019, <https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/otnosheniya-rossii-i-evrosoyuza-v-2020-g-vozmozhnosti-ogranicheniya-veroyatnye-trendy/> (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>11</sup> What is the future of the Eastern Partnership? Mateusz Kubiak, 04.11.2019, <https://warsawinstitute.org/future-eastern-partnership/> (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>12</sup> A Union that strives for more, My agenda for Europe, By candidate for President of the European Commission Ursula von der Leyen, 2019, [https://ec.europa.eu/commission/sites/beta-political/files/political-guidelines-next-commission\\_en.pdf](https://ec.europa.eu/commission/sites/beta-political/files/political-guidelines-next-commission_en.pdf) (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>13</sup> European Commission presents its proposal for a new enlargement methodology, 05.02.2020, <https://europeanwesternbalkans.com/2020/02/05/european-commission-presents-its-proposal-for-a-new-enlargement-methodology/> (այցելվել է 12.03.2020թ.):

գարգացման հիմնական ուղեցույցը: Հաշվի առնելով նախորդ ծրագրի ձեռքբերումներն ու բացթողումները, առհասարակ Արևելյան գործընկերության ներկայիս իրավիճակը՝ ընթանում են լուրջ քննարկումներ, թե առաջիկա տարիներին ինչ մոդելի շուրջ են կառուցվելու տարածաշրջանի երկրների և ԵՄ հարաբերությունները: Կախված այդ հարաբերությունների խորությունից՝ առաջարկվում են համագործակցության մի շարք մոդելներ, որոնցից ամենաշատ քննարկվողը թերևս ընդհանուր ԱԼԳ ծրագրից այսպես կոչված «եռյակի» առանձնացման գաղափարն է: «Եռյակը», որը բաղկացած է ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիրը ստորագրած երկրներից՝ Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան, ԱԼԳ ծրագրի մեկնարկից ի վեր կարողացել է ԵՄ-ի հետ ավելի խոր հարաբերություններ հաստատել, հետևաբար Բոյուսելից ակնկալում է առանձնահատուկ վերաբերմունք:

2019թ. աշնանը ԵԺԿ խմբի Լիտվայի պատվիրակությունը ներկայացրել էր «Եռյակի ռազմավարություն 2030»-ը, որը ենթադրում է ԱԼԳ շրջանակներում առանձնահատուկ հարաբերությունների կառուցում ԵՄ-ի հետ առավել սերտ համագործակցություն հաստատած և Ասոցացման համաձայնագիրը ստորագրած 3 երկրների՝ Վրաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի հետ: ԱԼԳ շրջանակներում տարբերակված հարաբերությունների հիմքում նախաձեռնության հեղինակները դնում են այն գաղափարը, որ ասոցացված «Եռյակը» իր ապագան որոշել է կապել ԵՄ-ի հետ և հետևաբար պետք է դրա համար խրախուսվի: Միաժամանակ, գաղափարի հեղինակների համոզմամբ՝ տարբերակված մոտեցումը նաև ԱԼԳ մյուս երկրներին կխրախուսի վերանայել իրենց քաղաքականությունը, հատկապես եթե «եռյակի» հաջողությունները տեսանելի և օրինակելի լինեն:

Այսպես, «Եռյակի» գաղափարի հեղինակներն առաջարկում են, որպեսզի ԵՄ-ն նախաձեռնի հետևյալ քայլերը.

1. Տա եվրոպական «Եռյակի» գործընթացի մեկնարկը. ըստ որում՝ առաջարկվում է ստեղծել ԵՄ կողմից փափուկ ուժի նոր գործիքակազմ, որը եռյակի երկրներին հնարավորություն կտա ավելի ակտիվ առաջ տանել իրենց բարեփոխումների օրակարգը: Այս նախաձեռնությամբ նաև առաջարկվում է եռյակի երկրներին ԵՄ-ի հետ համագործակցության գարգացման նոր գործիքակազմի տրամադրում: Այս մոտեցումը հնարավորություն կտա պահպանել 3 երկրների եվրոպական կողմնորոշման շահագրգռվածությունը և վերջիններիս կխրախուսի՝ գնալու նոր, ցավոտ, բայց անհրաժեշտ բարեփոխումների ճանապարհով:

2. Եվրոպական «Եռյակի» գործընթացը պետք է առաջնորդեն ԵՄ ինստիտուտները և գործընթացով հետաքրքրված երկրները. առաջարկվում է «Եռյակի» գործընթացը կյանքի կոչել 2014-ին Գերմանիայի կողմից առաջ քաշված

«Բեռլինյան գործընթացի» նմանությամբ, որի նպատակն էր արագացնել Արևմտյան Բալկանների երկրների եվրաինտեգրման գործընթացը: Առաջարկվում է, որ ինչպես «Բեռլինյան գործընթացի» պարագայում, այս դեպքում նույնպես «Եռյակի» գործընթացում ներգրավվեն ԵՄ անդամ այն երկրները, որոնք ԱԼԳ զարգացման հարցում հատուկ հետաքրքրություն ունեն:

3. «Եռյակի» գործընթացը պետք է նշանակալի նախագծերի և ծրագրերի ինտենսիվ օրակարգ ունենա. որպես հիմք կարող է օգտագործվել «Բեռլինյան գործընթացի» և Եվրոպական տնտեսական տարածաշրջանի լավագույն փորձը:

«Եռյակի» գործընթացի արդյունավետ ընթացքն ապահովելու համար առաջարկվում է նախաձեռնել մի շարք միջոցառումներ: Մասնավորապես առաջարկվում է մի շարք կարևոր ոլորտներում ներդրումային քաղաքականության կենտրոնացում, ԵՄ տարբեր ծրագրերից և գործիքներից օգտվելու հնարավորություն, այս երկրներին աջակցելու համար առանձին ինստիտուտների և քաղաքականության ձևավորում: Ըստ նախաձեռնության հեղինակների՝ «Եռյակի» գործընթացը պետք է դառնա ԵՄ աջակցությունը վայելող աշխարհաքաղաքական գործընթաց, իսկ ԵՄ ներսում պետք է ձևավորվի համախոհ անդամ երկրների կոալիցիա, որն էլ առաջ կտանի «Եռյակի» օրակարգը<sup>14</sup>:

ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիրը (AA) ստորագրած եռյակի երկրների հետ հետագա համագործակցության առաջարկվող մոդելներից մեկն էլ այսպես կոչված (AA+) մոդելն է: Գաղափարի աջակիցները գտնում են, որ եթե չվերանայվեն Ասոցացման համաձայնագրերը և այն ստորագրած երկրների առջև չբացվեն նոր հնարավորություններ, ապա այդ երկրների՝ ԵՄ-ի հետ հարաբերություններում լճացում տեղի կունենա: Սա կարող է հանգեցնել նրան, որ Ասոցացման համաձայնագիրը ստորագրած երկրները, տեսնելով, որ ԵՄ-ի հետ ավելի խոր ինտեգրման ճակատագիրը մշուշոտ է, կսկսեն աստիճանաբար ԵԱՏՄ-ի հետ համագործակցության եզրեր փնտրել: Պետք է նշել, որ այս միտումը այժմ էլ նկատվում է. Մոլդովան ԵԱՏՄ-ում դիտորդի կարգավիճակ ունի, Վրաստանը փորձում կարգավորել ՌԴ-ի հետ տնտեսական հարաբերությունները<sup>15</sup>:

(AA+) մոդելի շրջանակներում առաջարկվում է ակտիվացնել Ասոցացման համաձայնագիրը ստորագրած երկրների և ԵՄ-ի միջև ոլորտային

<sup>14</sup> Non-paper, Our Strategy on the Future of Eastern Partnership, 10.2019, <https://tsajunga.lt/wp-content/uploads/2019/10/LT-EPP-Trio-Strategy-2030.pdf> (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>15</sup> The Eastern Partnership at 10: Adapting European approaches for stability and security for the next decade, Brookings Institution, 28.01.2020, <https://www.brookings.edu/events/the-eastern-partnership-at-10-adapting-european-approaches-for-stability-and-security-for-the-next-decade/> (այցելվել է 12.03.2020թ.):

համագործակցությունը: Մասնավորապես դիտարկվում է հարաբերությունների խորացումը մաքսային համագործակցության, էներգետիկ միության, տրանսպորտային համայնքի, թվային միասնական շուկայի, ապատեղեկատվության և կիրեռանվտանգության, քրեական արդարադատության և ոստիկանության համագործակցության ոլորտներում<sup>16</sup>:

ԱԼԳ եռյակի հետ հետագա համագործակցության առաջարկվող մոդելներից մեկն էլ այսպես կոչված Եվրոպական քաղաքական և տնտեսական տարածքի (EPEA) գաղափարն է՝ հիմնված Եվրոպական տնտեսական տարածքի (EEA-Նորվեգիա, Իսլանդիա, Լիխտենշտեյն) օրինակի վրա: Ըստ այս գաղափարի կողմնակիցների՝ այն պետք է ենթադրի ԱԼԳ 3 երկրների և ԵՄ-ի միջև այնպիսի համագործակցություն, որը չի ենթադրի անդամակցություն ԵՄ-ին կամ ՆԱՏՕ-ին, մյուս կողմից կապահովի համագործակցության ավելի բարձր մակարդակ, քան Ասոցացման համաձայնագիրը չստորագրած մյուս երկրների պարագայում<sup>17</sup>:

Ընդհանուր առմամբ, եվրոպացի փորձագետների կողմից քննարկվում են ԱԼԳ եռյակի հետ հետագա համագործակցության նաև այլ տարբերակներ: Դրանցից են՝ Թուրքիայի հետ հարաբերությունների մոդելը, ԵՄ անդամ չհանդիսացող՝ բալկանյան երկրների հետ համագործակցության մոդելը և այլն: Չնայած առաջարկվող մոդելների տարբերությանը՝ մի բան ակհայտ է, որ դրանք առավելապես հիմնված են ԱԼԳ շրջանակներում «Եռյակի»՝ Ուկրաինայի, Վրաստանի, Մոլդովայի հետ տարբերակված հարաբերությունների գաղափարի վրա<sup>18</sup>:

Միաժամանակ պետք է նշել, որ ԱԼԳ շրջանակներում «Եռյակի» հանդեպ առանձնահատուկ քաղաքականության կողմնակիցները երբեմն իրենց առաջարկություններում նշում են նաև Հայաստանի նկատմամբ տարբերակված մոտեցման անհրաժեշտության մասին: Այսպես, 2020-ից հետո ԱԼԳ երկրների հետ հարաբերությունների զարգացման առաջարկվող մոդելներից մեկն էլ այսպես կոչված «Եռյակ+1» մոդելն է՝ Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա + Հայաստան:

2019թ. դեկտեմբերի 8-10-ին Թբիլիսիում տեղի ունեցած Եվրանեսթի 8-րդ խորհրդարանական վեհաժողովի ժամանակ ընդունվեց «Եռյակ+ 2030 ռազմավարության ապագան. կառուցելով Արևելյան գործընկերության ապագան»

<sup>16</sup> SCENARIOS FOR A WIDER EUROPE, Michael Emerson, 14.02.2019, <https://www.ceps.eu/ceps-publications/scenarios-wider-europe/> (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>17</sup> A Geopolitically Aware EU and Its Eastern European Neighbours: More Realism, More Investment, Barbara Lippert, 11, 2019, <https://www.swp-berlin.org/10.18449/2019C44/> (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>18</sup> The Eastern Partnership Vision after 2020, Jakub Benedyczak, Anna Maria Dwyer, Lidia Gibadło, Elżbieta Kaca, Jakub Piehkowski, Daniel Szeligowski, 03, 2019, <http://www.tihanypolitics.eu/wp-content/uploads/2019/04/The-Eastern-Partnership-Vision-after-2020.pdf> (այցելվել է 12.03.2020թ.):

խորագրով բանաձևը: Բանաձևում առաջարկվում է «Եվրոպական եռյակի» գործընթացի շրջանակներում ԱԼԳ երկրների հետ հետագա համագործակցությունը կառուցել այսպես կոչված «Եռյակ+1» մոդելի հիման վրա: Սա ենթադրում է, որ ԱԼԳ երկրների շարքում բացի այսպես կոչված «Եռյակի»՝ Մոլդովայի, Ուկրաինայի և Վրաստանի նկատմամբ տարբերակված քաղաքականությունից, առաջարկվում է որոշակի առանձնահատուկ մոտեցում ցուցաբերել նաև Հայաստանի նկատմամբ՝ հիմնվելով ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) վրա:

Այս բանաձևում նույնպես առաջարկվում է հիմնվել Բեռլինյան գործընթացի դրական փորձի վրա: «Եռյակ+1» ռազմավարությունը, ըստ դրա հեղինակների, պետք է ենթադրի ԱԼԳ շրջանակներում նշված 3+1 երկրների հետ ավելի արդյունավետ համագործակցության ձևավորում՝ ԵՄ կողմից ավելի լայն գործիքակազմի կիրառմամբ: Կախված այս գործընթացի հաջողությունից՝ այն պետք է նախադրյալներ ստեղծի նաև ԱԼԳ մյուս երկրների հետ հարաբերությունների խորացման համար<sup>19</sup>:

Ուշագրավ է, որ 3+1 գործընթացում Հայաստանին ներառելու առաջարկը հիմնավորվում է 2017-ին ստորագրված ՀԸԳՀ-ի առկայությամբ, ինչը ևս մեկ անգամ վկայում է այդ համաձայնագրի կարևորության մասին: Ըստ էության՝ շատ կարևոր է, որ ԵՄ կողմից ԱԼԳ զարգացման նոր ռազմավարությունը մշակելիս Հայաստանը չդիտարկվի Բելառուսի և Ադրբեջանի հետ նույն հարթության վրա: ՀԸԳՀ-ի ճիշտ կիրարկումը և դրա ընձեռած հնարավորությունների պատշաճ օգտագործումը Հայաստանին հնարավորություն կտա մեկ քայլ առաջ լինել ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիրը չստորագրած մյուս երկրների՝ Ադրբեջանի և Բելառուսի նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, դեռ հայտնի չէ, թե ԵՄ երկրները ԱԼԳ ծրագրի զարգացման որ մոդելը կընտրեն: Հավանաբար այդ հարցում որոշակի պարզություն կմտցվի այս տարվա ամռանը կայանալիք՝ ԱԼԳ հերթական գագաթնաժողովի ժամանակ: Միջազգային փորձագիտական շրջանակների կողմից քննարկվում են նաև ԱԼԳ տարածաշրջանում անվտանգության համակարգի այլ մոդելներ:

<sup>19</sup> RESOLUTION on the future of the Trio Plus Strategy 2030: building a future of Eastern Partnership, EURONEST PARLIAMENTARY ASSEMBLY, 09.12.2019, [http://www.epgencms.europarl.europa.eu/cmsdata/upload/439b3edc-e523-4a0e-a9bc-e6c8db51ed75/NEST\\_8th\\_urgency\\_resolution\\_EN.pdf](http://www.epgencms.europarl.europa.eu/cmsdata/upload/439b3edc-e523-4a0e-a9bc-e6c8db51ed75/NEST_8th_urgency_resolution_EN.pdf) (այցելվել է 12.03.2020թ.):

### 3. ԱԼԳ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՅԼ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Մի շարք միջազգային փորձագետներ կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում ԵՄ ընդլայնումը ԱԼԳ երկրների հաշվին համարում են անիրատեսական և գտնում են, որ հարկավոր է գտնել այդ տարածաշրջանում անվտանգության համակարգի այլ մոդել: Վերջիններս իրենց հիմնավորումներում նախ հաշվի են առնում անցյալի փորձը՝ հատկապես Ուկրաինայի, Վրաստանի նկատմամբ ՌԴ-ի ձեռնարկած քայլերը, միաժամանակ անիրատեսական են համարում ԱԼԳ երկրների անդամակցությունը ԵՄ-ին կամ ՆԱՏՕ-ին՝ թեկուզ հենց ՌԴ-ի հնարավոր կոշտ հակազդեցության պատճառով:

Վերջերս ամերիկյան հայտնի ուղեղային կենտրոններից մեկը՝ «RAND corporation»-ը հրապարակել էր մի լայնածավալ վերլուծություն, որտեղ առաջարկվում էր ԱԼԳ տարածաշրջանում՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Բելառուս, Մոլդովա, ձևավորել անվտանգության նոր համակարգ: Այդ համակարգը պետք է հիմնվի տարածաշրջանում գերտերությունների շահերի հավասարակշռման սկզբունքի վրա, հաշվի առնի տարածաշրջանի առանձնահատկությունները և Արևմուտք-ՌԴ առճակատման ռիսկերը<sup>20</sup>:

Մասնավորապես, անվտանգության ավելի կայուն համակարգ ձևավորելու համար առաջարկվում է նախ ստեղծել տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության հարցերով խորհրդակցական հստակ մեխանիզմ: Երկրորդ՝ գերտերությունների, տարածաշրջանում վերջիններիս գործընկերների և մյուս երկրների համար սահմանել վարքագծի ընդունելի պայմաններ: Երրորդ՝ տարածաշրջանի երկրներին «երրորդ ճանապարհի» ընտրության հնարավորություն տալ: Չորրորդ՝ տարածաշրջանում սահմանել վստահության և անվտանգության կառուցման մեխանիզմներ:

Վերլուծության հեղինակները տարածաշրջանի երկրները բաժանում են 3 խմբի.

1. Չմիացման երկրները՝ Ադրբեջանը և Մոլդովան, որոնք չեն ցանկանում հայտնվել բացառապես մեկ բևեռի՝ ՌԴ-ի կամ Արևմուտքի ազդեցության տակ, նույնիսկ եթե այդ բևեռներից մեկի հետ ունեն ավելի սերտ հարաբերություններ:
2. ՌԴ դաշնակից երկրները՝ Հայաստանն ու Բելառուսը:
3. Արևմտամետ երկրները՝ Վրաստանը և Ուկրաինան: Այս երկրներից յուրաքանչյուրը առկա ստատուս քվոյի պարագայում ունի որոշակի ռիսկեր: Չմիացման երկրները գտնվում են երկու բևեռների ճնշման ներքո. ՌԴ

<sup>20</sup> A Consensus Proposal for a Revised Regional Order, CSIS Headquarters, 10.02.2020, <https://www.csis.org/events/consensus-proposal-revised-regional-order> (այցելվել է 12.03.2020թ.):

դաշնակիցները Մոսկվայի լիակատար վերահսկողության տակ հայտնվելու մտահոգություն ունեն, իսկ արևմտամետ երկրները շարունակում են ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին անդամակցելու անհրատեսական հույսեր փայփայել, ՌԴ-ի հետ հարաբերություններում լարվածություն ստեղծել՝ դրանից բխող բոլոր ռիսկերով:

Ընդհանուր առմամբ, առաջարկվում է տարածաշրջանի երկրների, Արևմուտքի և ՌԴ-ի մասնակցությամբ ստեղծել փոխզիջումների մի այնպիսի մեխանիզմ, որն այս 6 երկրներին հնարավորություն կտա նույնիսկ աշխարհաքաղաքական կողմնորոշումը փոխել փոխզիջումների, բոլոր ռիսկերը և հնարավորությունները հաշվի առնելու միջոցով: Մասնավորապես, նշվում է, որ այդպիսի մեխանիզմի առկայությունը հնարավորություն կտա նույնիսկ ԱԼԳ երկրներում տեղի ունեցող հեղափոխություններից կամ իշխանափոխություններից հետո խուսափել կտրուկ աշխարհաքաղաքական ռևերանսներից<sup>21</sup>:

Առհասարակ, եվրոպացի շատ փորձագետներ գտնում են, որ ԱԼԳ ծրագիրը պետք է ավելի ճկուն դառնա: Նախ հարկավոր է հաշվի առնել այնտեղ գտնվող 6 երկրների առանձնահատկությունները, աշխարհաքաղաքական ընտրության տեսանկյունից դրանց օբյեկտիվ հնարավորությունները<sup>22</sup>: ԱԼԳ ծրագրի հետագա զարգացման առաջարկվող մոդելներից մեկն էլ տարածաշրջանի երկրների հետ ավելի ազատ հարաբերությունների կառուցումն է: Այս տեսանկյունից բավական հետաքրքիր է Հայաստանի օրինակը, որը լինելով տարածաշրջանում ՌԴ անհերքելի դաշնակիցը և հանդիսանալով ՀԱՊԿ-ի ու ԵԱՏՄ-ի անդամ, 2017-ին ԵՄ-ի հետ ստորագրած ՀԸԳՀ-ի շնորհիվ կարողացել է ձևավորել ԵՄ-ի հետ հարաբերությունների բավական ընդարձակ օրակարգ: Նման ճկուն մոտեցում փորձում է որդեգրել նաև Մոլդովան, որը ստորագրելով ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիրը՝ փորձում է համագործակցել նաև ԵԱՏՄ-ի հետ: Հետագայում հարաբերականորեն այպես կոչված «և՛, և՛»-ի մոդելը կարող է կիրառվել նաև Ադրբեջանի ու Բելառուսի կողմից:

<sup>21</sup> A Consensus Proposal for a Revised Regional Order in Post-Soviet Europe and Eurasia, RAND Corporation, Samuel Charap, Jeremy Shapiro, John J. Drennan, Oleksandr Chalji, Reinhard Krumm, Yulia Nikitina, Gwendolyn Sasse, 2019, [https://www.rand.org/pubs/conf\\_proceedings/CF410.html](https://www.rand.org/pubs/conf_proceedings/CF410.html) (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>22</sup> Lessons Learnt From the Eastern Partnership, GWENDOLYN SASSE, 02.05.2019, <https://carnegieeuropa.eu/2019/05/02/lessons-learnt-from-eastern-partnership-pub-79450> (այցելվել է 12.03.2020թ.):

## 4. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԱԿԱՍԱԸ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆԱԿԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԼԳ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ինչպես նշվեց, ԱԼԳ ծրագրում ընդգրկված հարավկովկասյան 3 երկրները՝ Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը գտնվում են ԵՄ-ի հետ հարաբերությունների տարբեր մակարդակներում: Եթե Վրաստանը ստորագրել է Ասոցացման համաձայնագիրը, ապա Ադրբեջանը հրաժարվել է այն ստորագրելուց և ԵՄ-ի հետ առանձին համաձայնագրի շուրջ դեռևս անորոշ ճակատագրով բանակցություններ է վարում: Հայաստանը, հրաժարվելով ստորագրել Ասոցացման համաձայնագիրը, 2017-ին ԵՄ-ի հետ ստորագրել է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, որը այժմ գտնվում է ԵՄ երկրների կողմից վավերացման փուլում:

Վրաստանը՝ որպես ակնհայտ ռազմավարական նպատակ է ընտրել անդամակցությունը ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին, թեև վերջին տարիներին փորձում է, հատկապես տնտեսական ոլորտում, համագործակցության եզրեր փնտրել նաև ՌԴ-ի հետ: Հայաստանը հանդիսանում է ՀԱՊԿ-ի և ԵԱՏՄ-ի անդամ և մեծ հաշվով աշխարհաքաղաքական կողմնորոշման կտրուկ փոփոխության հնարավորություն չունի, ուստի փորձում է, ՀԱՊԿ-ին և ԵԱՏՄ-ին անդամակցությունը կասկածի տակ չդնելով, հավասարակշռված հարաբերություններ զարգացնել նաև ԵՄ-ի ու ՆԱՏՕ-ի հետ: Ադրբեջանը ընտրել է չմիացման տարբերակը և ո՛չ հանուն ԵՄ-ի հետ հարաբերության զարգացման, ո՛չ էլ հանուն ՀԱՊԿ-ի կամ ԵԱՏՄ-ի հետ համագործակցության խորացման պատրաստ չէ լուրջ զիջումների դիմել: Այսպիսի պայմաններում ԱԼԳ ծրագրի շրջանակներում հարավկովկասյան 3 երկրների առաջնահերթությունները միմյանցից խիստ տարբեր են:

### 4.1 Վրաստան

Վրաստանը ընդհանուր առմամբ բավականին դրական է տրամադրված ԱԼԳ ծրագրի հանդեպ և այն համարում է հետագայում ԵՄ-ին անդամակցելու անցումային հարթակ: Ընդհանուր առմամբ, ինչպես Ուկրաինան, Վրաստանը նույնպես կողմ է ԵՄ-ի կողմից Ասոցացման համաձայնագիրը ստորագրած երկրների նկատմամբ տարբերակված քաղաքականությանը՝ հատկապես ֆինանսական աջակցության ոլորտում, պաշտպանում է ԵՄ կողմից որդեգրված «ավելին՝ ավելի դիմաց» քաղաքականությունը: Հաշվի առնելով ՌԴ-ի հետ ունեցած տարածքային վեճը՝ Վրաստանը ԱԼԳ ծրագիրը դիտարկում է նաև քաղաքական համատեքստում և այդ հարթակը հաճախ օգտագործում է հակառուսական հայտարարությունների նպատակով: Հենց ՌԴ-ի հետ



հակամարտության համատեքստում Վրաստանը կարևորում է նաև ԱԼԳ շրջանակներում համագործակցությունը անվտանգության ոլորտում:

Միաժամանակ, ԱԼԳ ծրագիրը Վրաստանի համար կարևոր է մի շարք ռազմավարական ենթակառուցվածքային ծրագրերի ֆինանսավորման և իրականացման տեսանկյունից: Բացի այդ, Վրաստանի համար կարևոր է ԵՄ աշխատաշուկայի հասանելիությունը իր քաղաքացիների համար. օրինակ՝ 2017-ին դեպի Վրաստան ուղղված օտարերկրյա դրամական փոխանցումների 31%-ը եղել է ԵՄ-ից<sup>23</sup>: Ընդհանուր առմամբ, ԵՄ կողմից 2017-2020թթ. համար Վրաստանին տրամադրվող Անհատական աջակցության շրջանակի ֆոնդը Հարավային Կովկասում ամենամեծն է և նախատեսում է 371-453 մլն եվրոյի աջակցություն<sup>24</sup>: 2020-ից հետո Արևելյան գործընկերության ծրագրի նոր ռազմավարության շրջանակներում Վրաստանը ձգտելու է դիրքավորվել որպես Հարավային Կովկասում ԵՄ հիմնական գործընկեր, այդ թվում՝ փորձելով ստանալ տարածաշրջանի համար նախատեսվող ԵՄ ֆինանսական աջակցության գերակշիռ մասը:

Հաշվի առնելով ԵՄ-ում ԱԼԳ ծրագրի հետագա զարգացման շուրջ ծավալվող քննարկումները, որտեղ նշմարվում է «Եռյակի» նկատմամբ տարբերակված քաղաքականության գաղափարի գերակայությունը, կարելի է ենթադրել, որ ԵՄ-ն նույնպես Հարավային Կովկասում իր հիմնական ջանքերը կուղղի Վրաստանի հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ: Քիչ հավանական է, որ Բրյուսելը առաջիկա տարիներին կարողանա բավարարել ԵՄ անդամ դառնալու Վրաստանի ցանկությունը: Ամեն դեպքում, Ասոցացման համաձայնագրի թարմացումը և ռազմավարական համագործակցության խորացումը ԵՄ-Վրաստան հարաբերությունների զարգացման ամենահավանական սցենարն է:

## 4.2 Ադրբեյջան

Ինչպես արդեն նշվեց, Ադրբեյջանը վարում է տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներին չմասնակցելու քաղաքականություն, հետևաբար վերջինիս հետաքրքրությունը ԱԼԳ ծրագրի նկատմամբ այնքան էլ մեծ չէ: Բաքվի մասնակցությունը ԱԼԳ-ին առավելապես պայմանավորված է քաղաքական շարժառիթներով. վերջինս փորձում է այս հարթակն օգտագործել Արցախյան հարցում սեփական քարոզչությունը տարածելու նպատակով: Միաժամանակ,

<sup>23</sup> The Eastern Partnership Vision after 2020, Jakub Benedyczak, Anna Maria Dyner, Lidia Gibadło, Elżbieta Kaca, Jakub Pieńkowski, Daniel Szeligowski, 03, 2019, <http://www.tihanyopolitics.eu/wp-content/uploads/2019/04/The-Eastern-Partnership-Vision-after-2020.pdf> (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>24</sup> Georgia Single Support Framework (SSF) (2017-2020), 13.07.2018, [https://eeas.europa.eu/delegations/nicaragua/48497/georgia-single-support-framework-ssf-2017-%E2%80%93-2020\\_en](https://eeas.europa.eu/delegations/nicaragua/48497/georgia-single-support-framework-ssf-2017-%E2%80%93-2020_en) (այցելվել է 12.03.2020թ.):

Ադրբեջանի իշխանությունները պատրաստ չեն ընդունելու ԵՄ ստանդարտները և դրանք տեղայնացնելու, ինչը ուղղակիորեն հակասում է ԱԼԳ ծրագրի առաքելությանն ու նպատակներին: Ադրբեջանը բազմիցս հայտնել է ԵԽԽՎ-ի, ԵՄ տարբեր կառույցների քննադատությունները, ՄԻԵԴ-ի որոշումները անտեսելու իր դիրքորոշումը, այդ թվում՝ վերջին խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ հնչած քննադատություններից հետո, ուստի Բաքվի նման կոշտ քաղաքականությունը թույլ չի տալիս ԱԼԳ շրջանակներում ձևավորել համագործակցության շատ թե քիչ լայն օրակարգ:

Մեծ մասամբ Ադրբեջանին չի հետաքրքրում նաև ԱԼԳ շրջանակներում ԵՄ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությունը, քանի որ այն սովորաբար պայմանավորված է լինում բարեփոխումների օրակարգի հետ, ինչը Ադրբեջանի իշխանությունների համար անընդունելի է: ԵՄ կողմից 2018-2020թթ. համար Ադրբեջանին տրամադրող «անհատական աջակցության շրջանակի» ֆոնդը կազմել է ընդամենը 42-51 մլն եվրո<sup>25</sup>: Ավտորիտար քաղաքական համակարգի, բայց նաև երկրի բնականոն զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը Բաքվին հնարավորություն են տալիս ԵՄ-ի հետ հարաբերություններում հանդես գալ ավելի կոշտ հռետորաբանությամբ:

Ուշագրավ է 2019թ. դեկտեմբերին Ադրբեջանի նախագահ Ալիևի արած այն հայտարարությունը, որ Ադրբեջանը թեև չի պատրաստվում դուրս գալ ԱԼԳ ծրագրից, բայց չի պատրաստվում նաև դրանում ակտիվ մասնակցություն ունենալ: Նա նաև նշել էր, որ նախապատվությունը տալիս է ԵՄ-ի հետ երկկողմ հարաբերություններին և հայտարարել, թե Ադրբեջանի համար ԱԼԳ ծրագրի նպատակները անհասկանալի են, քանի որ եթե այն եվրոինտեգրումն է, ապա հետխորհրդային երկրների համար այդ նպատակը անհասանելի է<sup>26</sup>:

Մյուս կողմից՝ Ադրբեջանը կարևորում է ԵՄ-ի հետ համագործակցությունը էներգետիկ և ենթակառուցվածքների զարգացման ոլորտում և շահագրգռված է ԱԼԳ ծրագրի շրջանակներում այս ուղղությամբ տարվող քաղաքականությամբ: Հանդիսանալով ԵՄ-ին նավթ մատակարարող կարևոր գործընկերներից մեկը, ինչպես նաև ի դեմս Հարավային գազային միջանցքի՝ ունենալով ԵՄ-ին գազ մատակարարելու հավակնոտ ծրագրեր, Բաքուն փորձում է ԵՄ-ի հետ հարաբերություններում շեշտադրել համագործակցության հենց այս ուղղությունները:

<sup>25</sup> Single Support Framework for EU support to Azerbaijan (2018-2020), 2018, <https://library.euneighbours.eu/content/single-support-framework-eu-support-azerbaijan-2018-2020> (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>26</sup> Ильхам Алиев: Азербайджан не намерен активно участвовать в «Восточном партнерстве» 23.12.2019, <https://haqqin.az/news/165996> (այցելվել է 12.03.2020թ.):

Այս տեսանկյունից հարկավոր է ուշադրություն դարձնել Բրեքզիթի գործընթացի ավարտի հնարավոր հետևանքներին: Տարիներ շարունակ Մեծ Բրիտանիան, լինելով ԵՄ-ում Ադրբեջանի հիմնական գործընկերներից մեկը, ամենաշատն էր ներկայացված Ադրբեջանի էներգետիկ նախագծերում, և ինչ որ տեղ Ադրբեջանը ԵՄ-ում իր քաղաքականության լոբբինգը իրականացնում էր նաև բրիտանացիների միջոցով: Մեծ Բրիտանիայի՝ ԵՄ-ն լքելուց հետո Բաքուն որոշակիորեն կկորցնի իր այդ լծակները և ազդեցությունը, թեև նույնիսկ ԵՄ-ից դուրս Լոնդոնը կշարունակի պաշտպանել Ադրբեջան-ԵՄ էներգետիկ ծրագրերում իր ունեցած շահերը<sup>27</sup>:

Ֆորմալ առումով Ադրբեջանի մասնակցությունը ԱԼԳ-ին հիմնականում հետապնդում է մի քանի նպատակ՝ փորձել Ադրբեջանը ներկայացնել որպես եվրոպական երկիր, ԼՂՀ հարցում հակազդել ՀՀ քարոզչությանը և բարձրաձայնել սեփական շահարկումները՝ փորձելով Վրաստանի և Ուկրաինայի հետ միասին դիրքավորվել որպես «օկուպացիայից տուժած» երկիր: Ուշագրավ է, որ անընդհատ ձգձգվում է նաև Ադրբեջանի և ԵՄ-ի միջև համաձայնագրի ստորագրման գործընթացը, ինչը վկայում է հարաբերություններում առկա մի շարք անհաղթահարելի խնդիրների մասին: Թեև շատերը կանխատեսում են, որ այդ համաձայնագիրը ի վերջո կնախաստորագրվի հունիսին սպասվող ԱԼԳ գագաթնաժողովի ժամանակ<sup>28</sup>, սակայն չի բացառվում, որ որոշ անհամաձայնությունների պատճառով դրա ստորագրումը կրկին հետաձգվի, ինչպես եղավ 2019-ին՝ նախորդ գագաթնաժողովի ժամանակ:

Ընդհանուր առմամբ, դժվար է կանխատեսել, որ ԱԼԳ ծրագրի 2020 թվականից հետո նախատեսվող նոր ռազմավարությունը էական փոփոխություններ կմտցնի ծրագրի շրջանակներում ԵՄ-Ադրբեջան համագործակցության օրակարգում: Ադրբեջանը, ինչպես նաև Բելառուսը ԱԼԳ շրջանակներում դիտվում են որպես հետնապահ երկրներ, իսկ ԵՄ կողմից քննարկվող տարբերակված քաղաքականության համատեքստում վերջիններիս նկատմամբ հետաքրքրությունը ավելի կնվազի: Ամենայն հավանականությամբ ԵՄ-ն կփորձի Ադրբեջանի և Բելոռուսի հետ հարաբերություններում շեշտը դնել երկկողմ ձևաչափի վրա, առաջին հերթին ավարտին հասցնել Ադրբեջանի հետ բանակցվող համաձայնագրի ստորագրումը: Չի բացառվում, որ հետագայում այս երկրները առհասարակ դուրս մնան ԱԼԳ ծրագրից: Սակայն սա չի նշանակում, որ ԵՄ-Ադրբեջան հարաբերությունները չունեն զարգացման հեռանկար. կարծես

<sup>27</sup> 10 Years of Eastern Partnership in Azerbaijan: Still a long way to go, Anar Valiyev, 13.11.2019, <https://ge.boell.org/en/2019/09/13/10-years-eastern-partnership-azerbaijan-still-long-way-go> (այցելվել է 12.03.2020թ.):

<sup>28</sup> Мамедъяров обсудил соглашение Евросоюза с Азербайджаном, 17.02.2020, <https://haqqin.az/news/170292> (այցելվել է 12.03.2020թ.):

երկու կողմերն էլ հետաքրքրված են դրանց ոլորտային (գազ, նավթ, միջազգային տրանսպորտային միջանցքներ) զարգացմամբ՝ շեշտը դնելով երկկողմ ձևաչափի վրա:

### 4.3 Հայաստան

ԱԼԳ ծրագրի շրջանակներում ՀՀ-ԵՄ հարաբերությունների հիմնաքարը հանդիսանում է 2017-ին ստորագրված ՀԸԳՀ-ը, որը ինչ-որ տեղ հանդիսանում է ԵՄ-ի և ԱԼԳ «Եռյակի» միջև ստորագրված Ասոցացման համաձայնագրերի մի փոքր պակաս հավակնոտ տարբերակը: Պատահական չէ, որ երբ քննարկվում են 2020-ից հետո ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի զարգացման սցենարները, Հայաստանը հաճախ կամ ընկալվում է որպես առանձին դերակատար կամ ավելի շատ դիտարկվում է «Եռյակի» երկրների հետ նույն շարքում: ՀԸԳՀ-ի կարևոր առաքելություններից մեկն էլ հենց այն է, որ այդ համաձայնագրի առկայությունը Հայաստանին հնարավորություն է տալիս ԱԼԳ երկրների շարքում դիրքավորվել այսպես կոչված «առաջապահ» երկրների՝ Վրաստանի, Ուկրաինայի ու Մոլդովայի կողքին, միաժամանակ՝ ի տարբերություն այս երկրների, լինելով տարածաշրջանում ՌԴ-ի ամենամոտ դաշնակիցներից մեկը և անդամակցելով ՀԱՊԿ-ին ու ԵԱՏՄ-ին:

Հայաստանի համար ԱԼԳ ծրագիրը առաջին հերթին կարևոր է երկրի զարգացման ու բարեփոխումների օրակարգը առաջ տանելու տեսանկյունից: Ծրագրով առաջարկվող բարեփոխումները, որոնց մեծ մասը նաև նախատեսված են ՀԸԳՀ-ով, Հայաստանին հնարավորություն են տալիս ԵՄ-ի աջակցությամբ և ֆինանսավորմամբ բարելավել մի շարք ոլորտներ: Սակայն ԵՄ-ի հետագա քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ կախված է լինելու ՀՀ կառավարության կողմից բարեփոխումների իրականացման հարցում վճռականությունից և դրանց տեմպից:

2020-ից հետո ԱԼԳ ծրագրի ապագայի շուրջ քննարկումներում հաճախ ներկայացվում է այն տեսակետը, որ մասնակից երկրների նկատմամբ միայն «ավելին՝ ավելի դիմաց» մոտեցումը բավարար չէ. հարկավոր է երբեմն կիրառել նաև այսպես կոչված «ավելի քիչ՝ ավելի քչի դիմաց» մոտեցումը: Այս մոտեցման կողմնակիցները մատնանշում են մասնավորապես Մոլդովայում տեղի ունեցող զարգացումները, որը թեև ստորագրել է Ասոցացման համաձայնագիրը, սակայն վերջին տարիներին այդ երկրում նկատվում է ժողովրդավարության հետընթաց, պարբերաբար կրկնվող քաղաքական ճգնաժամեր: Սա նշանակում է, որ ԵՄ-ն առաջիկա տարիներին շարունակելու է ԱԼԳ երկրների հետ հարաբերությունները զարգացնել՝ հաշվի առնելով մարդու իրավունքների, քաղաքական մշակույթի,

ժողովրդավարության և այլ ոլորտներում այդ երկրների գրանցած հաջողությունները:

Խոսելով «ավելին՝ ավելիի դիմաց» մոտեցման մասին, կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ ՀՀ կառավարությունը բարեփոխումների և ՀԸԳՀ կիրարկման հարցում հապաղում է: Ինչպես հայտնի է, ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզը եվրոպական կողմի հետ համաձայնեցվել է բավական ուշացումով՝ միայն 2019թ. ամռանը: Փորձագետների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ կառավարությունը իր ռազմավարական ծրագրերից շատերը չի համապատասխանեցրել ՀԸԳՀ-ով ստանձնած պարտավորությունների հետ, որոնք ենթադրում են շատ որոշակի ոլորտային պարտավորություններ՝ որոշակի ժամանակացույցով: Առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ 2019-ի համար նախատեսված գործողություններից շատերը դեռևս կառավարության կողմից չեն իրականացվել<sup>29</sup>: Սա հետագայում կարող է խնդիրներ առաջացնել, քանի որ, ինչպես նշվեց, ԵՄ երկրները ԱԼԳ մասնակիցների նկատմամբ իրենց քաղաքականությունը հաճախ պայմանավորում են բարեփոխումներով և ձեռք բերված պայմանավորվածությունների պատշաճ կատարմամբ:

Դանդաղ է ընթանում նաև ԵՄ երկրների կողմից ՀԸԳՀ-ի վավերացման գործընթացը. համաձայնագրի ստորագրումից ավելի քան 2 տարի անց դեռևս այն վավերացրել են ԵՄ անդամ 27 պետություններից 22-ը: Սա նշանակում է, որ ԵՄ երկրների համար դեռևս համաձայնագիրն ամբողջությամբ ուժի մեջ չի մտել, այդ թվում՝ համաձայնագրի քաղաքական բաղադրիչը, որը այնքան կարևոր է հայկական կողմի համար: Շատ կարևոր է, որպեսզի ՀՀ իշխանությունները գործադրեն բոլոր հնարավոր ջանքերը՝ մնացած երկրների կողմից համաձայնագրի հնարավորինս շուտ վավերացումն ապահովելու նպատակով: Ինչպես նշվեց, նախատեսվում է, որ ԱԼԳ առաջիկա գագաթնաժողովի ժամանակ կարող է ստորագրվել ԵՄ-Ադրբեջան նոր համաձայնագիրը: Մինչ այդ, ԵՄ կողմից ՀԸԳՀ-ի վերջնական վավերացումը, հաշվի առնելով դրա քաղաքական բաղադրիչը, կբացառի Ադրբեջանի հետ համաձայնագրում ԼՂՀ հարցում մեզ համար ոչ բարենպաստ, ՀԸԳՀ-ում այդ մասով տեղ գտած տեքստին էականորեն հակասող ձևակերպումները:

Եթե դեռ մինչև 2018-ի իշխանափոխությունը ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչները հայտարարում էին, որ ԵՄ-ի հետ մուտքի արտոնագրերի ազատականացումը

<sup>29</sup> ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացմանն ուղղված ՀՀ կառավարության գործունեության ուսումնասիրություն, «Լոյս» հիմնադրամ, 2020, <http://www.luys.am/reports/e055abc0f4e1a824c7f72.1ReportCEPAfinal-edited.pdf> (այցելվել է 12.03.2020թ.):

նախատեսվում է ավարտին հասցնել մինչև 2020 թվականը, ապա այժմ՝ 2020-ի փետրվարի դրությամբ, անգամ դեռևս հայտնի չէ, թե երբ են սկսվելու այդ ուղղությամբ բանակցությունները: Ընդ որում, նույնիսկ եթե այդ բանակցությունները սկսվեն շատ մոտ ապագայում, գրեթե անհնարին է, որ այս տարվա ընթացքում նման համաձայնագիր ստորագրվի, առավել ևս՝ վավերացվի ԵՄ անդամ երկրների կողմից: ԱԼԳ առաջիկա գազաթնաժողովի ժամանակ մուտքի արտոնագրերի ազատականացման հարցը պետք է լինի հայկական պատվիրակության առաջնահերթություններից մեկը:

ԱԼԳ ծրագրի՝ 2020-ից հետո նոր ռազմավարության շրջանակներում ՀՀ-ի համար ավելի նպաստավոր պայմաններ ապահովելու հարցում կարող են խոչընդոտներ ստեղծել նաև երկրում առկա քաղաքական, դատաիրավական ճգնաժամերը: Ժողովրդավարական զարգացման ուղուց ՀՀ իշխանությունների կողմից ցանկացած շեղում ԵՄ երկրների կողմից կարող է գնահատվել որպես հետընթաց, ինչը բնականաբար բացասաբար կանդրադառնա ԱԼԳ շրջանակներում ՀՀ-ի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքի վրա: ԵԽԽՎ Հայաստանի հարցով համազեկուցողների, Վենետիկի հանձնաժողովի, մի շարք ազդեցիկ եվրոպական քաղաքական ուժերի կողմից վերջին շրջանում բարձրաձայնվող մտահոգությունները առաջին ազդակներն են:

Ինչպես նշվեց, 2020-ից հետո ԱԼԳ ծրագրի զարգացման քննարկվող մոդելներից շատերի պարագայում Հայաստանը դիտարկվում է ավելի շուտ «Եռյակի» երկրների կողքին, ինչը վերջին 4-5 տարիներին Հայաստանում գրանցված ժողովրդավարական առաջընթացի արգասիքն է: Հարկավոր է գործուն քայլեր ձեռնարկել, որպեսզի ԱԼԳ զարգացման նոր ռազմավարության շրջանակներում Հայաստանը «չպոկվի» եռյակից և չհայտնվի հետնապահ երկրների շարքում: Մեծ հաշվով՝ հենց Հայաստանում տեղի ունեցող գործընթացներից է կախված, թե ԱԼԳ ծրագրի զարգացման որ մոդելի շրջանակներում ԵՄ-ն կշարունակի Հայաստանի հետ զարգացնել հարաբերությունները:

Միաժամանակ շատ կարևոր է, որ ԱԼԳ ծրագրի հետագա զարգացման շրջանակներում Հայաստանի տեղի և դերի, ինչպես նաև ԵՄ-Ադրբեյջան սպասվող պայմանագրում հակահայկական ձևակերպումները բացառելու հարցերը լինեն ՀՀ-ԵՄ ներկայացուցիչների հանդիպումների, շփումների առաջնահերթությունների շարքում: Ընդ որում, այս հարցերը պետք է բարձրաձայնվեն շփումների բոլոր մակարդակներում՝ սկսած խորհրդարանական դիվանագիտությունից, վերջացրած ամենաբարձր մակարդակի հանդիպումներով: Յավոք, ԵՄ-ում հայկական խորհրդարանականների վերջին շրջանի գործունեությունը, ինչպես նաև վարչապետի վերջին, շատ փորձագետների գնահատմամբ՝ բովանդակազուրկ և

զուտ ներքաղաքական օրակարգ ունեցող բրյուսելյան այցը խոսում են այն մասին, որ վերոհիշյալ հարցերի նկատմամբ բավարար ուշադրություն չի ցուցաբերվում:

ԱԼԳ ծրագրի շրջանակներում ճիշտ դիրքավորումը Հայաստանի համար կարևոր է նաև ԵՄ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության գործիքակազմից օգտվելու տեսանկյունից: ԵՄ կողմից 2014-2020թթ. համար ՀՀ-ին տրամադրող «անհատական աջակցության շրջանակի» ֆոնդը կազմել է 252-308 մլն եվրո<sup>30</sup>: Հաշվի առնելով նաև ՀԸԳՀ-ի առկայությունը, ՀՀ կառավարությունը պետք է փորձի մեծացնել այս և այլ գործիքների շրջանակներում ԵՄ կողմից ՀՀ-ին տրամադրվող ֆինանսական աջակցությունը:

Ընդհանուր առմամբ, ԱԼԳ երկրների շարքում Հայաստանը վերջին տարիներին ընկալվում էր որպես միաժամանակ ԵՄ-ի և ՌԴ-ի հետ հավասարակշռված հարաբերություններ ունեցող, հաջողված օրինակ: Սա նախևառաջ նախորդ տասնամյակի ընթացքում վարած ճկուն արտաքին քաղաքականության արդյունքն է: 2018-ին Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններից հետո, կապված ինչպես ՀՀ-ԵՄ, այնպես էլ ՀՀ-ՌԴ հարաբերությունների հետ, առաջացան մի շարք մտահոգություններ և սպասումներ: Երկու տարի անց կարող ենք փաստել, որ մտահոգությունները պահպանվել և խորացել են, իսկ սպասումները հիմնականում չեն արդարացվել: Հայաստանը ԱԼԳ երկրների շարքում պետք է դիրքավորվի «և՛, և՛»-ի, այլ ոչ թե «ո՛չ, ո՛չ»-ի տրամաբանության ներքո, ուստի կարևոր է պահպանել վերջին տարիների արտաքին քաղաքական ձեռքբերումները՝ այդ թվում ԱԼԳ ծրագրի շրջանակներում:

<sup>30</sup> Programming of the European Neighbourhood Instrument (ENI) – (2017-2020), Single Support Framework for EU support to Armenia, 2016, [https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/armenia\\_ssf\\_2017-2020\\_final.pdf](https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/armenia_ssf_2017-2020_final.pdf) (այցելվել է 12.03.2020թ.):

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: